ՀՌՉԱԿԱԳԻՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ժողովրդական պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը բոլոր մակարդակների խորհուրդների պատգամաւորների մասնակցութեամբ՝

արտայայտելով ժողովրդի կամքը, որը վաւերացուած է փաստօրէն անցկացուած հանրաքուէում եւ ԼՂԻՄի ու Շահումեանի շրջանի իշխանութեան մարմինների 1988-1991թթ. որոշումներում, նրա ազատութեան, անկախութեան, իրաւահաւասարութեան եւ բարիդրացիութեան ձգտումը,

արձանագրելով Ադրբեջանի հանրապետութեան կողմից «1918-1920թթ. պետական անկախութեան վերականգնման» հռչակումը,

հաշուի առնելով, որ Ադրբեջանում վարուող ապարտեիդի եւ խտրականութեան քաղաքականութիւնը հանրապետութիւնում ստեղծել է հայ ժողովրդի հանդէպ ատելութեան եւ անհանդուրժողականութեան մթնոլորտ, որը յանգեցրել է զինուած ընդհարումների, մարդկային զոհերի, խաղաղ հայկական գիւղերի բնակիչների զանգուածային տեղահանութեան,

հիմնուելով ԽՍՀՄ գործող օրէնսդրութեան եւ օրէնքների վրայ, որոնք ինքնավար կազմաւորումների ժողովուրդներին եւ համահաւաք ապրող ազգային խմբերին իրաւունք են տալիս ինքնուրոյնաբար լուծելու իրենց պետական-իրաւական կարգավիճակի հարցը ԽՍՀՄից միութենական հանրապետութեան դուրս գալու դէպքում,

նշելով, որ Շահումեանի շրջանի տարածքը նոյնպէս բռնութեամբ անջատուել է Լեռնային Ղարաբաղից եւ հայ ժողովրդի վերամիաւորման ձգտումը համարելով բնական եւ միջազգային իրաւունքի նորմերին համապատասխան,

ձգտելով հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարիդրացիական յարաբերութիւնները վերականգնել միմեանց իրաւունքների փոխադարձ յարգման հիման վրայ,

նկատի ունենալով երկրի իրադրութեան բարդութիւնն ու հակասականութիւնը, ապագայ Միութեան, իշխանութեան ու կառավարման միութենական կառուցուածքների ճակատագրի անորոշութիւնը,

յարգելով եւ հետեւելով մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագրի եւ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրաւունքների միջազգային պակտի, քաղաքացիական, քաղաքական ու մշակութային իրաւունքների միջազգային պակտի սկզբունքներին եւ յոյս ունենալով միջազգային հանրութեան ըմբռնմանն ու աջակցութեանը,

ՀՌՉԱԿՈՒՄ ԵՆ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի եւ դրան կից Շահումեանի շրջանի սահմաններում (համառօտ՝ ԼՂՀ):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը օգտւում է ԽՍՀՄ սահմանադրութեամբ եւ օրէնսդրութեամբ հանրապետութիւններին տրուած լիազօրութիւններից եւ իրեն իրաւունք է վերապահում ինքնուրոյնաբար որոշելու իր պետական-իրաւական կարգավիճակը՝ երկրի եւ հանրապետութիւնների ղեկավարութեան հետ քաղաքական կոնսուլտացիաների ու բանակցութիւնների հիման վրայ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածքում մինչեւ ԼՂՀ սահմանադրութեան եւ օրէնքների ընդունումը գործում են ԽՍՀՄ սահմանադրութիւնն ու օրէնսդրութիւնը, ինչպէս նաեւ՝ ներկայումս գործող միւս օրէնքները, որոնք չեն հակասում սոյն հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին եւ հանրապետութեան առանձնայատկութիւններին:

ԲՈԼՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԱՆՑԿԱՑՈՒԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՒ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆՍՏԱՇՐՋԱՆ